**Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում**

**Առարկա Б1.Б9. Մակրոէկոնոմիկա**

**<u>Անոտացիա</u>**

**Աշխատատարությունը՝** *12 կրեդիտ,432 ակադեմիական ժամ*

**Քննություն**

*Համառոտ նկարագրություն.* Մակրոէկոնոմիկա դասընթացը իրենից ներկայացնում է մակրոէկոնոմիկայի տեսական հիմքերը, ուսումնասիրում է մակրոտնտեսական այնպիսի հիմնական հասկացություններ, ինչպիսիք են ազգային թողարկման ծավալը, տնտեսական աճ, գործազրկություն, գնաճ և այլն: Դասախոսությունների ընթացքում մանրամասն ուսումնասիրվում է պետության դերը տնտեսության մեջ, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները, ինչպես նաև փողի և բանկային համակարգի դերը տնտեսության մեջ:

Նշված թեմաներն ուսումնասիրելուց հետո, վերլուծության է ենթարկվում մակրոտնտեսական քաղաքականությունը բաց տնտեսության մեջ, մասնավորապես, վճարային հաշվեկշռի դերը և դրա կառավարման մեթոդները, ինչպես նաև արժութային քաղաքականության առանձնահատկությունները: Առանձնին թեմաներ նվիրված են տնտեսական աճի և միջազգային համագործակցության ժամանակակից ռազմավարություններին:

Դասախոսություններն ընթանում են ակտիվ շփման ձևաչափով, որն ուսանողներին հնարավորություն է տալիս հարցադրումներ կատարել, քննարկել՝ տվյալ թեմայի հետ կապված, ժամանակակից հարցեր, անմիջական մասնակցություն ունենալ նոր տեղեկատվության յուրացման գործընթացում:

*Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ.* Մակրոէկոնոմիկան հանդիսանում է մասնագիտական գործընթացի հիմնական մաս և փոխկապակցված է «Տնտեսության պետական կարգավորումը», «Մեգաէկոնոմիկա», «Անցումային շրջանի տնտեսագիտության հիմնախնդիրները» առարկաների հետ: